



ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԻ ՄԻԱՅԵՔ

Ս Ի Բ Ա Ս

ՄԱԴՈՅԻ ԴԴՈՒՄԸ

(ԱԳՐՈ-ՊԱՏՄՎԱԾՔ)

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՅԵՐ-ԳԱՎ-ԳՅՈՒՂ-ՀՈՂ-ԲԱԺՆԻ

ՅԵՐԵՎԱՆ

1927 թ.

891.99
Ս-55




391.99
U-55 my

Ս Ի Բ Ա Ս

- 6 NOV 2011

Մ Ա Դ Ո Յ Ի Դ Դ Ո Ւ Մ Ը

(ԱԳՐՈՊԱՏՄՎԱԾՔ)



ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՅԵՐ-ԳԱՎ-ԳՅՈՒՂ-ՀՈՂ-ԲԱԺՆԻ

ՅԵՐԵՎԱՆ

1927 թ.

31.07.2011

55392

ՀԱՅՊՈԼԻԳՐԱՅԻ 1-ԻՆ ՏՊԱՐԱՆ
 ՊԱՏՎԵՐ 378
 ԳՐԱՌԵՊ. 425 Բ. ՏԻՐԱԺ 1500

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
 ԳՐԱԴԱՐԱՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ
 ՀԱՍՏ. ԱՊՐ. ՀՐԱՆԱԿ
 ԵՎ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

8659-53

«Մազույի դղամբ» մի փոքր նմաչ և ազրոպնության
 միջոցով ձեռք բերված գյուղատնտեսական այն մեծ նվա-
 ճումների, վոր խորհրդային իշխանության շնորհիվ ստա-
 ցել և մեր սոցիալիստական հայրենիքի գյուղացիու-
 թյունը:

Հոկտեմբերյան հեղափոխության տասնամյակին իր
 դավանի ոչխատավոր գյուղացիությանն և նվիրում՝

ՅԵՐԵՎԱՆԻ ԳԱՎՔԱՂԳՈՐԾԿՈՄԻ

ՀՈՂ-ԳՅՈՒՂԲԱԺԻՆԸ

2-4-0

ՄԱԴՈՅԻ ԳԳՈՒՄԸ

1.

Հազիտի ստոր քամին ենպես եր փչում, վոր Մա-
դույի ամբողջ մարմինը սրտթում եր. մի ստոր գոզ
ցնցում եր նրան վտախց գլուխ. նրա գեմքը, վոր ամսից
ավել չէր անխլիկ կուչ եր յեկել և այնտեղ ուր յերևում
եր կաչին ցրտից կապտել-սևացել եր: Բեխերից ու ծը-
նտաի մազերից սառցի կտորները քաշ ելին ընկել և նրա
գլխի յերբեմնակի շարժումներից, նրանք ևս որորվում
եյին, ինչպես դանդակները նաուի վզին:

Նրա զգեստները ամբողջովին պատած ելին մանրիկ-
ավազի նման ձյունահատիկներով, վորոնց տակից յեր-
բեմն-յերբեմն յերևում եր նրա մարմնի մերկ մասերը,
վորովհետև զգեստները վաղուց արդեն կորցրել եյին ի-
րենց բնական գույնը և մաշված կտորները ծլուլ-ծլուլ
կախ եյին ընկել:

Նրա մեջքը կիսով չափ կզվել եր ու մի ծանր բեռ ճըն-
չում եր այն. նա անքում եր բեռից՝ յերբեմն վտաքերը
որորվում եյին ու քիչ եր մնում գլորվի ձյունների մեջ,
սակայն ինչ վոր մըթմըթալով նա աշխատում եր պահել
իրան:

Մազոն գնում եր յերբեմնի բնդարձակ խճուղով,
վորը գիշերվանից սկսած և մինչև ցերեկը շարունակ-
վող բուքից ամբողջովին կորել եր ձյունի սպիտակ սա-

վանի մեջ և միայն մի փոքրիկ սև շատավիզ էր յերև-
փում, փորը բացել էյին հեախոան անցորդները:

Նա դժգոհ հայացքով յերբեմնակի դիտում էր իր չբը-
ջապատը, ունկնդրում քամու վռոնոցին և հուսահատ
մտքում սկսում էր անիծել իրան ու իր բախտին:

«Ինչ զարհուրելի յե, — մտածում էր նա, — հարձեա
բնությունն էլ դաշն կռած իր բախտի հետ հարածում
էր իրան»:

Ու նա ավելի էր ուժ տալիս իր վտանքին, թափա-
հարում ամբողջ մարմինն, բեռն ուղղում մեջքին ու վի-
զը ստաջ գցելով ավելի արագացնում էր իր քայլերը:

— Գնա՛մ, գնա՛մ, գուցե կնտեղ, քաղաքում մի բա-
րի բանի հանդիպեմ և ես ձմբան տակից մի կերպ գրախո
տգաւեմ:

Մտածում էր նա և այդ մտածումը թունդ էր հա-
նում նրա հոգին:

Անցնում էյին ժամերը... ու այդ ժամերը, մանա-
փանդ Մազոյի համար սարիններ էյին գտնել...

Ու Մազոն վերջապես քրտինքի մեջ կորած հասավ
քաղաք. հոգնությունից ու բեռի ծանրությունից մեջքն
տվելի ծուկ և վտաքերը դանդաղ շարժելով անցավ գե-
պի քաղաքային մեծ շուկան:

Այնտեղ հավաքված էյին բազմաթիվ գյուղացիներ.
փորը ցորեն, փորը հաց, փորը պանիր, փորը հով, — մի
խոսքով ամեն մարդ մի բան բերել, ծախում էր:

Նա հուսահատությամբ անտավ, փոր ինքը փոչինչ-
փոչինչ իր սեփականը չուներ, չի կարող ծախել, կամ
գնել, մինչդեռ այնտեղ, հենց շուկայի կենտրոնում,
հսկայական քարաշեն խանութում ծախում են հարյուր
բարիք: Նա ակամա ներս մտավ և մոտենալով մի գլու-
ղացու հարցրեց:

- Ես ի՞նչ խաղէյինի դուքան ա:
- Եստեղ խաղէյին չկա՛, Փսթ, — ասավ ինքնավստահ.

կերպով գյուղացին, փորը ինքն էլ դարձացավ իր գա-
տագության ու համարձակության վրա:

- Բա սուանց խաղէյն էլ դուքա՞ն կը լինի:
- Ես կոպերատ ա, հա՛, — վրա բերեց նորից նույն
գյուղացին, — ինչպես յերևում էր նա շատ էր գործ ու-
նեցել այդ կոպերատի հետ:

- Կոպերա՞ւ, — ասավ դարձացած Մազոն:
- Հա՛ կոպերատ, խի՞ րանց բերանդ բաց մնաց:
- Ա՛խր, — ասավ նույն դարձանքով Մազոն, — մեր
գեղն էլ կոպերատ կա, ամա ետգամ մեծ, ետգամ աղ-
բանք ո՞վ ա տեսել, մեզ մոտ շարաթներ ա բխում,
փոր բսկի մեկ արչին շիթ էլ ա չի լինում:

— Դե՛ ես Յերեան ա, ամա ձերը յես ինչ գիցամ ինչ
գեղ ա, — ասավ նորից ինքնավստահ գյուղացին և պար-
կի բերանը բանալով, փորով դրողված էր Մազոյի հետ
խոսելիս սկսավ կարատֆիլը դատարկել կշեռքի մեջ,
խակ կոպերատիվի գործակառարը քաշն սունելով ըն-
դունել:

Մազոն ստաջին անգամն էր տեսնում այդպիսի մեծ
խանութ, նա ուշադրությամբ սկսավ դիտել թուփ-թուփ
չիթերին, մահուդներին, սպա՛ ստալներին, բաժակնե-
րին և բոլոր այն սպրտանքներին ինչ կար կոպերատի-
վում:

Նրա սիրտը մղկատում էր թե ինչպես ինքը փոչինչ
չունի և փոչինչ չի կարող գնել այդ առատ սպրտանքից:

Նա դուրս յեկավ մեջքի բեռը վայր դրեց կոպե-
րատիվի դասնը, ուր նստել էյին մի քանի գյուղացիներ
և ինքն էլ նստեց հանդստանալու:

Փստոցում արդեն բավական տաք արև էր, փորը սա-
րեցի Մազոյի համար դարձան շափ ազդու էր, ու նա
այդ գիրքով սկսավ դիտել բազմությանը, վորոնք ան-
հոգությամբ գնում-գալիս էյին, գվարձանում, հանաք-
ներ անում: Մազոն նայում էր նրանց մի բուպե հրճվում,

տակայն մի ներքին զգացում դարձյալ նրան կաշկանդում էր ու նա հուսահատ:

— Ե՛՛հ ջհանգամբ գրանք, —ասավ, — յես իմ գաղզը հագամ:

Բայց հենց այս խոսքերը, վոր արտասանվեցին շրջուկով գոց հանեցին նրա ամբողջ մարմինը. նա մի անտակ թմբիլի մեջ ընկավ, գեմքին ինչ վոր ցնցումներ կատարվեցին ու նա կուչ գալով գրուխը թաղեց ձեռքի ափերի մեջ սկսավ մտածել և մի խորը հուսահ թաշեց, վորի հետ կարծես նրա թոքերը դուռ յեկան...

...Նրան պատկերացավ իր տունը, ընտանիքը, իր կին Չանեն, յերկու փոքրիկ աղջիկները, յերկու աղան, — յերկուսն էլ գույլ, բայց ինքը՞, ինքը՞, ի՞նչ և անում... նա վերհիշեց անցյալ ամառը. ահա՛ նա իր Չանեյի և 16 տարեկան սերգույի հետ գնում և արար հունձի... յերեք գեսյատին ցանքս են արել... հետոնք քաշում և գերանդին սրելու, բայց ինչ սրելու կարիք կա, գիշերըր Սերգոն ենպես և սրել, վոր քար կը կտրի, ուր մնաց հասկերը:

Նա սկսում և հունձը, բայց ափա՛ղ... հնձում և անվերջ, աշխատում և գերանդին, բայց բան չի ընկնում գերանդու բերանը. ես էլ քանի տարի յե, վոր բողբոջ թարսվել է՝ նրա արար բերք չի տալիս... տունկերը գլուխները հաղիվ քիչ դուրս են հանում գետնից, բորձրանում մի յերկու մաս ու եղպես էլ մնում: Ամբողջ յերեք գեսյատին տարածության վրա հաղիվ մեկ գեսյատինն և բուսել, և ահա հնձում և, հնձում Մազոն, աշխատում և Սերգոն, աշխատում Չանեն և գրա արդյունքը յինում և միայն քսան փութ հացահատիկ... չե՛, չե՛ Մազոն բախտ չունի, նրա գլխին խոտիկ և աստված...:

Հետո նա պատկերացնում և ձմեռնասկիզբը թե ինչ պես ինքը ստիպված և յինում միակ յեզր հանել գո-

մից... նա հիշում և այլ, ինչպես այս որվա կերած հացը ու սիրտը մղկտում և:

Ահա՛ Սերգոն, ահա՛ Չանեն. նրանք համարյա յայդ յեղծ Բարաքին, — այսպես էր յեզան անունը, — քանդում են մասրից և դուրս բերում բակը, Մազոն հուսակուտը բորձրացնում և ճիպոտը, հարվածում բարաքին և յեղծ կենդանին գլուխն որորելով, դանդաղ շարժվում և ու հանում շրջանային կենտրոնի շուկան... ա՛խ այլ չուկան... Բարաքը, այլ անբան կենդանին կարծես զգում և, բնազդը նրան թեյաղբում և, վոր իր հետ յավրան չի կատարվում ու նա սխուր բառաշում և:

Մազոն էլ հուզվում և, չի ուզում բաժանվել յեզից, բայց ինչ արած... յերեխաները սովի վատնդի աստջ են կանդնած...:

Ու մի անձանոթ ինեսուն սուրյի յե վճարում Մազոյին և հարյուր հիսուն սուրյիանոց Բարաքին վերցնում...:

Այս հիշողությունից Մազոն ցնցվեց մի խոր «ախ» թաշեց:

— Չե՛, —ասավ նա, — ինչ ուզում և յինի, ես տարի հայրՖը պախ հանել, ես տարի պախ բողբոջ բանի...:

Ու նա նորից ընկավ իր մտածումների մեջ. նա հիմա պատկերացնում և նորից դյուզը, նորից նույն արտը, բայց այս անգամ արդեն դարուն և. ամբողջ արտը պատած և կանաչ հասկերով, մի մեղմ քամի շնկչընկարով անցնում և նրանց վրայով ու շոյելով հասկերի գլուխը հանդիսա սրոր և ասում նրանց: Մազոն բախտավոր է, արար յավ բերք և տվել...:

...Որը բախտահան անցել էր ու Մազոն հանկարծ բողբոջ զգաց, զաղարեց այլևս մտածելուց. ի՞նչ անել, ինչպես դուրս գալ ես ձմրան տակից: Նա արդեն բախտահան բան տեսավ քաղաքում, բայց ի՞նչ կարող էր տալ այլ քաղաքը իրան... նրան հաց և պետք...:

Նա հուստակաուր ման յեկալ, մի քանի գյուղացիներ գաավ, գնաց խանր ու գիշերը շուտացրեց ենանդ...

* * *

Հետեյալ որերը մինչև գարնանարաց Մաղոն ելի մի քանի անգամ յեկալ քաղաք հետը բերելով միշտ միևնույն ծանր բեռը, իսկ թե ինչ կար այդ բեռի մեջ, ումնից եր վերցնում նա այդ մթերքները և աարած փողից ինչքան եր մնում իրան եզ մեկ իրան, մեկ էլ իրենց գյուղացի Վերգո ազային եր հայանի...

II

Գարունը բացվել եր, նա կանչում եր իր գավակներին աշխատանքի՝ բնության բնդարձակ ու յայնարձակ ծոցում:

Գաշտերը ծածկվել են կանաչ ծաղիկներով աշնանուցանը արդեն ծրել, գյուլար գուրս և ցցել:

Բայց Մաղոն գեռես վոչ մի թիզ ցանքս չի արել:

Նա պատրաստվում է գարնանացանքի, բայց յերը հիշում և անցյալ տարվա ցանքը, ստացած բերքը, սիրտը մզկտում և, համակվում մի տեսակ անվճռակամությամբ ու սխի չի անում աշխատանքի գնալ: Նա արգեն մի քանի անգամ գիտել և իր արար, բայց միշտ հուստակաուր հես և գարձել: Բա գա էլ հոգ և. ամբողջ տարածության մի քատորդը հաղիվ մաքուր սեռհոյ լինի, մնացածը խիճ ու քար և. հնարավոր և արդյոք նորից վստահել ու յերեխաների բերնից կտրած սերմացուն նրա մեջ գցել:

Բայց յերը մտաբերում և իր անցյալը, յերը մտածում և, վոր ինքը նորից ստիպված պիտի լինի ձմեռվա ցրտին քաղաքի ձամբեն չափչփել ադա Վերգոյի ապրանքը սաղացել, ինչ ա մի կտոր գարի հաց տանի իր

բողցած յերեխաներին՝ սիրտը մխկտում և ու գյուլար պտտվում:

Ահա՛ աչտը էլ գարնանային գեղեցիկ սրերից մեկն է. շատերն արդեն պատրաստվում են վաղը կամ մյուս սրը գաշա գուրս գալ վարի ու ցանքսի, իսկ ի՞նքը, ի՞նքը, — ո՞չ ստակալի յե... գյուղացիներն էլ կարծես խոտքը մեկ արած՝ ուզում են ձեռք առնել Մաղոյին, ահա մի խումբ համարվել են գյուղամեջ ու փախալով խոտում են:

— Մաղոյի ուղղեն ստաված կարել ա, — ասում եր մեկը, — արար նհենց քարոտ ա, փոր բսկի սերմն էլ ա չի սա:

— Ելած—չելածն էլ եզ արտատեղն ա գաթի, գրանից էլ ա, վոր խեր շտանա, պաի ժողովարարություն անի, — ասում էյին ավելի հեռատեսները:

— Յա թե չե, — վրա յեր բերում մի ուրիշը, — էլի ևս սարվա պես մի կտոր հացի համար պիտի Վերգոյի ապրանքը տանի սաղացնի քաղաքում, ու գեղումն էլ նորարություն անի նրան:

— Ադա Մաղո՛, — ձենը բարձրացրեց մի այլ գյուղացի, նկատելով հեռվից մտանցող Մաղոյին, — չո՛ւտ արի, չո՛ւտ գնանք ժողով:

Մաղոն հուսահատ ու գլխիկտը մտանցավ գյուղացիների խմբին և բերանն ու աչքերը ձգձգացնելով հարցրեց.

— Ի՞նչ ժողով:

— Ա՛, քու սուեը չքանգվի, չըջանի գյուղատանտարն ա յեկել, հրեն ան՛ս, ինչ շատպանդ աղջիկ ա, ցնաթոզ արտիզ ձար անի:

— Ասաված հեչ բան ա, ասում ա պաի գիտութենով ցանես արազ, — ավելացրին մի քանի ստավածապաշաներ կծու հեղնությամբ:

Մաղոն լուսթյամբ լուսում եր, միտյն յերբեմն հո-

գոյններ եր հանում, և չիմացայ թե ինչպես, ինքն ել գյուղացիների հասանքի հետ հասայ գյուղխորհրդի գրասենյակը:

Այնտեղ հավաքվել էյին մոտ 50-60 գյուղացիներ և ահագին ազմուկով խոսում էյին իրար հետ:

Մի քանիսը գույրասարը կյտրելով խրճիթ-քնիթեր-պարանից պողպատ լրագրները մեջ շինում էյին մատի հաստությամբ ծխախոտ և ծխում՝ արձակելով բերաններից քուլա-քուլա մուխը:

Մազոն մոտեցայ վերջրեց մեկից ասուիբ և մի պուպիրոս փաթաթելով, — փոր փոչ ալել փոչ պակաս հավասար եր իր բթամատին, — փստեց և սկսեց ծխել՝ կուլ տալով մուխը և ապա սնգամակերից հանելով:

— Եդ ինչ ա՞ Մազոս, — ասաց գեղացիներից մեկը, — բուխարիկ ա՞:

— Ձե մուֆաս պապիրոս ա, գրա համար ա բանց հասա շինել, — հեղնեց մի ուրիշը:

— Սիրար երած ա խեղճի, — մեջ մտավ մի յերկար շիրուխավոր, — գրա համար ել ուզում ա հովացնի:

Մազոն լուռ եր և սպասում եր ժողովի բացվելուն:

Քիչ հետո ժողովը բացվեց և շրջանային գյուղամտեսը, փոր մի յերխոտասարդ աղջիկ եր, աշխուժ շարժումներով առաջ անցայ ու սկսեց բացատրել նոր ձևի մշակությունների մասին:

Նա մանրամասն բացատրում եր, թե բույսի աճեցողության համար ինչպես և ինչ ձևով պիտի պարարտացնել հողը:

— Մեր հողերը, — ասում եր նա, — նմանում են անտեր, փորը յերեխայի, փոչ փոք նրա խնամելու վրա ուշադրություն չի դաձնում: Մեր գյուղացին սովորել և միշտ ստանալ, բայց տալու մասին փոչինչ չի մտածում: Ձե, փոր բույսն ել յերբ աճում և մեզ պես սնվում և, շնչում և, ջրվում և և առհասարակ ունի իր պահանջ-

ները: Հողը յերբ բավարարում և բույսի պահանջը՝ նրա ուժը պակասում և, հարկավոր և, փոր եզ ուժը, եզ սրունեղը հետ արվի հողին: Եդ սնունդը պիտական յեզվոյ կոչվում և ազոտ, կալիլ և Փոսֆոր, — ես յերեք բանն ել պիտի լինի հողի մեջ, փոր բույսը լավ աճի:

Յեկ նա գյուղական բառքառով բացատրում եր այդ պարարտանյութերի նշանակությունն ու նրանց ստանալու միջոցները: Ապա նա դարձավ արաքտորների և նրբանցով հողը վարելու աստվելություններին...

Նրա խոսքից հետո գյուղացիները ավեցին մի քանի հարցեր, և յերբ գյուղամտեսունհին քրաինքը սրբելով պատասխանեց մի քանիսի հարցերին, հանկարծ նրա խոսքը կտրելով ժողովականների միջից ցցվեց Մազոն՝

— Ըտենց բաներ չեմ հասկանում, — ասաց, — արաքտոր-մրաքտոր խելքիս չի պարելում. արոտ քարոտ ա՛, թե չցանեմ՝ ես տարի լավի սոված ենք մնալու, ցանեմ ել դատ չի բանում, ըսկի սերմն ել հետ չի ապլիս:

Մի քանիսը տեղից բացականչեցին, թե կարգը մի խանդարի, հերթով խոսի, բայց Մազոն իրանը շարունակեց:

— Թե ձեր գիղութենի մեջ գորություն կա, ինձ մի ճամբա ցույց ավեք:

— Լա՛վ, ընկեր ջան, ասաց գյուղամտեսունհին, փոր դեռ չգիտեր Մազոյի անունը, — յես ժողովից հետո կգամ, քու արար կը նայեմ ու քեզ խորհուրդ կը տամ թե ինչ պիտի անես...

* * *

Ժողովը վերջացայ. Մազոն սպասեց մինչև գյուղամտեսունհին դուրս յեկավ:

— Դե՛ դնանք, — ասաց գառավորի պահանջկոտությամբ:

Քիչ հետո նա գլուզատնտեսուհու հետ հասավ
գլուզի մոտերքը և ուշադրութեամբ սկսեց գննել իր
արարը:

Գլուզատնտեսուհին նայեց, ուշադրութեամբ դի-
տեց, (մի քանի անգամ կուսացավ քարերը վերցրեց, քցեց,
նորից վերցրեց), ապա գտնեալով Մազոյին՝ ասաց.—

— Մազո՛, արի ես տարի դու ցորեն մի ցանի, ինչ-
քան կարող ես մաքրի քարերից և բոստան դիր, որի-
նակ՝ կարող ես ցանել զգում, բազուկ, քայամ, խիար,
ձմերուկ, տաքանդ և այլն—դա ավելի՛ ոգտակար կլի-
նի, քան հացարույտերը:

Յե՛վ ապա սկսավ բացատրել թե յետնային շրջանում
առհասարակ հացարույտերի տեղ չե և յեթե բերք չի յե-
ղել անցյալ տարի, ապա այդ վո՛չ թե Մազոյի բազուկե
և, այլ տեղից ու պայմաններից:

Մազոն ուշադրութեամբ լսում էր գլուզատնտեսու-
հի Ղուլյանին, — այսպես էր նրա ազգանունը, — և յերբ
լսեց նրա խորհուրդը բոստան գնելու մասին նա նախ
կնձուեց ճակատը, գլուխը քիչ քորեց և ապա մի քանի
անգամ ավեց ու ասավ ինքն իրեն. . . մի բուսի վերհի-
չեց իր անցյալը. . . քաղցրի ճամբան, ապա ժողովր և
գլուզատնտեսուհու ճառը ու հանկարծ մի վճռական
չարժումն անելով ձեռքը հաստատակամ յերկարեց գլու-
զատնտեսուհուն և ասաց՝

— Յես քո ասածն արի, բոստան եմ տնկելու ես
տարի. յա՛ բազա, կամ պտի ենքան բերք ստանամ,
վոր ձմեռը կարենանք սպրել, սովից ազատվել, կամ
էլ խո յափ պտի մաղմուլն նստենք. . .

— Արա՛, — ասաց նույնպիսի հաստատակամու-
թեամբ գլուզատնտեսուհին, — չես փոշմանի և սովում էլ
չես մնա, իսկ յես խոստանում եմ ամեն ամիս գուլ և
քեզ նորանոր խորհուրդներ տալ. . .

Փամանակը վոսկի յե: Մազոն առանց այլևս աս-
տանվելու աշխատանքի լծեց իր ընտանիքի բոլոր ան-
գամներին:

Չանին, Սերգոն ու մյուս յերեք փոքրիկները Մա-
զոյի ղեկավարութեամբ դեռ ձեռքը չբացված մեկ-
նում էլին արար և սկսում իրենց սաժանելի աշխա-
տանքը:

Բայց այն հույսը, վոր զալիք ձմռանը այլևս սո-
ված չեն մնալու, այլևս Վերգոյի մութատածը չեն ընկ-
նելու, նրանց բոլորին լցնում էր աշխատանքի յետան-
գով և նրանք աշխատում էլին գերազանցել մեկը մյու-
սին:

Փոքրիկ Ռեհանը քարերը փեշն առած ձշում էր:

— Մարե, տե՛ս քսան քար եմ վերցրել միանգամից:

— Գրողը քեզ, — մեջ էր ընկնում նրանից փոքրը,
— եղ ինչ ա, վոր քսան հաս ես վերցնում, տե՛ս յես
հա. . . հազար հաս եմ վերցրել:

Փոքրիկի ասածը ընդհանուր ծիծաղ ատաջ բերեց:
Նրա համար ամենից մեծ թիվը հազար էր:

— Ապրե՛ք, ապրե՛ք, — սրտապնդում էր մայրը՝ Չա-
նեն, — բա՛ կեպես լավ աշխատեք, վոր եստեղի խիա-
րից ամենքիդ հինգ հաս կտամ ու ճալատուն դեյրեք կառ-
նեմ ձեզ:

Մազոն էլ լսում էր այս զվարճախոսութեանները՝
միխիթարվում և բահը, վորով նա փորում էր փոքրիկ
ածունները ավելի ուժգին էր շարժվում նրա ձեռքում,
ավելի խորն էր գնում մայր հողի կուրծքը ու դուրս
հանելով սե փափուկ շերտը շուտ էր տալիս կողքի և
այսպես անվերջ:

Անցավ մեկ, յերկու, յերեք շաբաթ և բանջարանու-
յր պատրաստ էր: Մազոն խնամքով ածունները մաս
առ մաս բաժանեց, նորից ուշադրութեամբ գննեց, ա-

մեն բույսի սահմանը փորձեց և ապա սկսեց անկել սեր-
մերը...

Քյուզամանասուհին իր խոսածան համաձայն ամառ-
վերջին յեկոյի և ծանոթանալով աշխատանքի հետ հիա-
ցած մնաց:

— Յես համատացած եմ,—ասով նա,—փոր քո
բանջարանոցը ամբողջ շրջանում առաջինը կը լինի,
հիմի քեզ մնում է, փոր ու չափում թյամբ հետևես բոլոր
ցանածներին և ժամանակին ջրես ու մարքես ավելորդ խո-
սերից:

— Աչքիս բույսի պես կը սրահեմ,—ասով խնդու-
թյամբ Մազան և շորհակալական զգացումով թոթվեց
զյուզամանասուհու ձեռքը...

IV.

Անցավ դարունն ու ամառը: Աշնանակիցքն եր-
Ամեն անգ փերձացել եր հունձը և արդեն աշխատանքը
զաչաներից անդամոտիվել եր կարերը:

Իսկ Մազան ամբողջովին կապիտալ եր իր բանջարա-
նոցին, փոր արդեն ծաղիկել, հասունացել եր: Նա ամառ-
վա բնթացքում մի քանի անգամ արդեն ծախել եր նրա
պաուզը և զյուզացիներին մեջ խոսակցության տարեկա
գտակ:

— Այա՛, —ինչ ես տուում,—դարմանում էլին նախ-
կին թերահավատները,—Մազան լավ խելք արեց, մար-
դի բազր բանել ա, անցած տարվա զրո տեղը, փոր
բակի ցորեն ել շեր բանում—նհենց բոստան ա բանել,
փոր քեֆդ աս:

— Մեկ չարթում քառասուն մանկի խիար ծախում
կը լինի ավելացնում էլին մյուսները:

— Ասածու բան ա,—ասին նորից աստվածասեր-
ները:

Բայց Մազան լավ գիտեր թե ում բանն եր և ո՛ւմ
եր պարտական իր բանջարանոցի համար:

Նա ինչպես միշտ այսուր ել իր յերեխաների և կնոջ
հետ գնացել եր բանջարանոց:

Փոքրիկ Ռեհանը, փոր արդեն հագել եր ճրլպտուն
դեյրեն, փոստոստում եր անունների մեջ, յերբեմն—յեր-
բեմն կոխտակելով բույսերը:

Մազան բարի ժպիտով մտանում եր նրան, բռնում
բարձրացնում մինչև իր ուսերը, ապա համբուրում և
ցած գնելով:

— Այ սատանա՛, —ասում եր,—թե մեկ ել կոխտակ
ես բույսերը ես կարմիր ասխտեղով բերանդ կվառե՛մ
հա՛:

— Ձեռ կարա՛, կը փախչեմ,—ճչում եր շարածճի
յերեխան ու փախչում:

— Այ Չանե՛, —մոտեցավ կնոջը Մազան,—քեֆդ
տեղն ա՛:

— Որ սոտի տեղը չի:

— Հա՞, յես ինչ գիտեմ... մի ես բոստանիցը
պրծնեմ քեզ ել մի լավ անթարի կտանեմ:

Չանեն ժպտում եր, թեթի խիում ամուսնու ու-
սին և ապա անցնում անունները նորից ու նորից գիտելու
բանջարեղենները:

Այդ ժամանակ եր ահա՛, փոր լուր սաացվեց զյու-
զում՝ թե շրջանի կենտրոնում այս տարվա բերքի առնի
որը, նոյեմբեր ամսին պիտի կազմվի բերքի ցուցահան-
դես:

Այնտեղ պիտի ցուցադրվեն զյուզամանասության
բոլոր արդյունքները, սկսած կովից ու վոշխարից մին-
չև զգումն ու զյազարը:

Քյուզան իրար անցավ:

Մազան ել իր բնասնիքը վերցրեց և շտապեց բան-
ջարանոցը ու սկսեց քննել իր բերքի արդյունքը: Նա
խնամքով ջոկեց, մեկ աս մեկ դասավորեց բոլոր լավ
տեսակի պաուզները՝ թե զգումից, թե տաքտեղից, թե

86597



բարամից, և մնացած բոլորից ու ապա գոհ իր բնորո-
թյունից ձեռքը խփեց կնոջ մեջքին:

— Ապրե՛ս, կնիկ ջան, ապրե՛ս, — լավ ոգնեցիր
ինձ ես տարի, լավ բերք ենք ստացել. . . թե չըջանում
հավնեցին ասում են փող պատի ասն:

— Քա դե՛ հերիք, — ասավ Չանեն ծիծաղելով. . .

V.

Նոյեմբերյան դով աստվոս եր. . .

Դեռ լուսածագին շրջանի կենտրոնում իրար են
խառնվել հիմնարկությունների աշխատակիցները, փո-
րոնք շրջանային գործադիր կոմիտեյի ղեկավարու-
թյամբ ցուցահանդեսի հրապարակի պատրաստությամբ
են գրադված:

Շրջագործ կոմիտեյի նախագահը բահն ու քլուեզը ձեռքին
փոս և փորում՝ պատվանդանների համար, իսկ մյուսնե-
րը սախտակներն են ամբացնում: Այսպիսով քիչ հետո
ամբողջ հրապարակում շուրջանակի կազմվում է փորոշ
բարձրության պատվարներ միտերքների համար:

Մի ուրիշ տեղ կամար են կառուցում, իսկ մեկը
մեխեր հավաքելով թուշում է արդեն պատրաստ կա-
մարին և մի մեխը ձեռքին, մյուսը բերանին՝ ամբաց-
նում է աշխտեղ գրոշակներ ու սրվա համապատասխան
պլակատներ և նկարներ:

Քիչ հետո ամբողջ հրապարակը պարզարվում է
քառանկյունի կարմիր գրոշակներով և հրապարակի
մեջատեղն էլ իբրև խորհրդանշան սրվա հանդիսի խոյս-
նում է մի ամբխան՝ վրան յերփնեբանդ ծաղիկների փուն-
ջեր:

Հրապարակը արդեն պատրաստ էր: Քիչ հետո հա-
վաքվում են գյուղացիները — բերելով ձիեր, կովեր, փոշ-
խարներ, հավեր, յուղ, պանիր, դգում, կաղամբ, դա-
ղար, ճակնդեղ և ապա նաև՝ անային գանազան գործ-
վածներ (չախեր, տանիթեբաներ) և այլն:

— Յերանի ամեն ուր ցուցահանդես լինի, — ասում
են գյուղացիներից մի քանիսը դիտելով բնդարձակ հրա-
պարակը և հիանալով նրա սարքավորմամբ:

Մագոն, փոքր նախորոք արդեն պատրաստվել էր՝
տեղ և հասնում և ցուցահանդեսի աչքի ընկնող մասերից
մինում բոնում է իր տեղը ու քնքույշ խնամքով իրար
կողքի յե դասավորում իր աստվի որը ջոկած պատու-
ները:

Նա դասավորելուց հետո՝ կնոջը Չանեյին թողնում
է աշխտեղ, իսկ ինքը գնում է շրջագայելու ցուցահան-
դիսի հրապարակը:

Նա ուշադրությամբ գննում է ամեն մի անկյուն,
ամեն մի պատուղի նմուշ և հարցեր է տալիս տերերին:

Նա բավական շրջեց, յերը հանկարծ նրա աչքին
բնկավ ճիշտ իր բերած նմուշների նման մի ուրիշը —
նո՛ւյն դգումը, նո՛ւյն կաղամբը, նո՛ւյն բողկը, նո՛ւյն
ճակնդեղը և ապա նաև գրանց բոլորի սերմերը:

Մագոն ձեռքը տարավ գլուխը, ամուր սեղմեց ճա-
կատը և վազեց դեպի իր «պավիլիոնը», դեպի Չանեն. . .

— Այ Չանե, — ասավ շնչակաուր:

— Հը ի՞նչ կա, — ասավ վախեցած կինը:

— Մենք մոռացել ենք մեր բույսերի սերմերը բե-
րել:

— Քա դու յել. ի՞նչ բաների հետեից ես ընկել, —
ասավ կինը հանդիմանությամբ:

— Այ կնիկ ի՞նչ ես ասում, ասանց սերմի բույս
կը լինի՞:

— Ե՛, ի՞նչ անենք, փոք. . .

— Պիտի գնամ բերեմ գյուղից:

— Այ մարդ գժվե՞լ ես, ի՞նչ է:

Մագոն տեսնելով, փոքր կինը համարում է, ասանց
այլևս խոսելու չուս յեկավ ու շտապեց դեպի իրենց
գյուղը:

Գյուղը հեռու յեր շրջանային կենտրոնից ավելի

քան չորս կիրովնար, սակայն Մաղոն ուժ ավելց վոս-
քերին ու գնաց:

Բաժական ժամանակ անցավ. ցուցահանդիսում ար-
դեն գյուղացիներն հավաքվում էին միտինդի, յերբ Մա-
ղոն քափ ու քրտինքի մեջ մտած վերադարձով՝ բերե-
լով հետք սերմերը:

Շատերը դարձացած նայում էին նրա կարմրատա-
կած դեմքին ու վոչ վոք չհասկացավ թե ինչու նա այդքան
հոգնել էր ու քրտնել:

Բայց Մաղոն կարծես հոգնածություն չէր գրում.
նա ուշադրությամբ սերմերը դատափորեց ամեն մեկն
իր տեղում և ապա ինքն էլ կնոջը բոթելով քցեց առաջ
և նրանք մոտեցան միտինդի հավաքված բազմությանը:

Այնտեղ սկսում են խոսել. խոսում են մի քանիսը,
բայց ամենքից շատ նրա ուշադրությանը դրամում և մի
տկնոցավոր մարդ:

— Ընկերներ՛ր, —ասում է նա գլխով ու բարձրա-
ձայն, —դեռ շատ հին ժամանակներում, յերբ գյուղա-
ցին լավ բերք էր ստանում, այդ բերքից նա պետք է
անպատճառ բաժին հաներ նաև իր աստվածներին, իսկ
այսօր գյուղացին հաշիվ է ապրիս իրեն, թե ինքն ինչ-
պե՞ս է վարել, ցանել, ի՞նչպես է պահել ու խնամել իր
կենդանիները: Նրանք, վորոնք լավ ու նոր ձեռով, գի-
տության ասածով են վարվել իրենց ցանքսերի ու կեն-
դանիների հետ՝ նրանք կստանան մրցանակ և զբանով
որինակ կը լինեն մյուսներին:

Մաղոն լսում է, լսում է ու ժպտում, միաժամանակ
նրա սիրտը թփթփում է. արդյոք կը հավանե՞ն իր նը-
մուշներին, արդյոք ինքը չի՞ սխալվել, կարողացի՞ր և
բնորել ամենարավերը իր պտուղներից և ապա մի ներ-
քին մղումով նորից ու նորից հետ է դառնում և դիտում
իր բերած նմուշները:

— Չե, չի սխալվել, —սրտապնդում է ինքն իրեն:

Ապա նորից է գառնում դեպի միտինդը. այս անգամ
արդեն խոսում է գյուղատնտեսուհի Ղուլյանը, Մաղոն
այլևս չի կարողանում իրան զսպել ու գոտում է՝

— Ուռոս՛, —և ծափահարում է զվարճանալով
մանկան պես:

Մյուս գյուղացիներն էլ միացան նրան և ծափահա-
րությունն ու ուռան դարձավ ընդհանուր:

Յերբ բոլորը լսեցին՝ Ղուլյանը շարունակեց:

— Ընկերներ՛ր, մենք այժմ անցնում ենք նայելու
նմուշներին, ով լավ է խնամել իր տավարը, ով լավ բերք
է ստացել իր արտից կամ բոստանից՝ նա էլ կստանա
մրցանակը:

Այնուհետև միտինդը ցրվում է. ամեն գյուղացի
չառպում է իր տեղը, իր միթերքների կամ կենդանիների
մոտ, իսկ յերեք հոգի—Ղուլյանը, ախնոցավորը, —վոր
խոսում էր քիչ առաջ և մի գյուղացի անցնում են
նմուշատերերի մոտով ու մեկ մեկ գիտում նրանց կեն-
դանիներն ու միթերքները:

— Հրմի մեր հերթն ա, —ծմլելով կնոջ թևն ասավ
Մաղոն, —յերբ յերեք հոգինոց խումբը վերջացրեց իր
գննությանը մոտակայում:

Մարդը և կինը բարեխ գլխով կանգնած էին՝
յերբ մոտեցավ խումբը:

Ախնոցավորն առաջ է անցնում:

— Հ՛ր, ես էլ քո՞նն է, —հարցնում է:

— Հա՛, հընկեր, —ասում է Մաղոն սրտապնդ, —
յես ու կնիկս մեր մատներով ենք հավաքել քարերը
բոստանից, —տե՛ս, —նա գյուղատնտեսի քթին է մոտե-
ցնում իր ձեռքափերի կոշտերը, —գիշեր ցերեկ հան-
դիսա չենք ունեցել, —ու շնորհակալ ենք հընկեր Ղուլ-
յանից, վոր մեզ ոգնեց մեր բոստանը բեջարմիչ անելու:

Ղուլյանը հավանության նշան է անում: Մի քանի
անգամ էլ գննելով Մաղոյի միթերքները ախնոցավոր

դյուզրանաեսն իր ձեռքի տետրում ինչ վոր նշանու-
կումներ արավ և սպա հետացան բոլորը միասին...

VI.

Հետեյալ աստիտա նույն տեղում նորից հավարվե-
ցին գյուզացիները:

Այսոր պեսք է հայտարարվեր այն անտեսություն-
ներն ցուցակը, վորոնք արժանացել էյին մրցանակի:

Գյուզացիները խառն ի խուռն խոսում, վիճում էյին.
Մազոն էլ խցկվեց նրանց մեջ ու խառնվեց ընդհանուր
խոսակցությանը:

— Մազո՛, Մազո՛, —մեկը հանաքով խփեց նրա
գլխին, —իե՛չքե՛չ ստանալու իշտահով ես յեկել հա՞...

Բայց յերկար շտեկ նրանց խոսակցությանը. դան-
դը հնչեց և բոլոր գյուզացիները հավարվեցին այն սե-
զանի շուրջը, ուր նստել էյին երեկվա յերեք հոգին,
ակնոցավորն առած մեջտեղը:

Մազոն առաջ անցավ մի տեսակ հուզմունքով և
տկանջները սրած՝ հայացքն հասեց ակնոցավորի բե-
րանին:

Ակնոցավորը մի քանի խոսք ասավ և սպա մի թուզթ
տարվ իր աջ կողքում նստած Ղուլյանի ձեռքը՝

— Կարդա՛, —ասաց նա:

Ղուլյանը սկսեց կարդալ:

— Քոչարյան Ղազար:

Ակնոցավորը շարունակեց:

— Քոչարյանը Թայշարուխցի յե, ստանում է 30
սուբլի մրցանակ լավ կովեր պահելու համար. նա իր
տանն ունի մի ամբողջ տավարի սերունդ:

Ղազարն առաջ անցավ. նա կլիներ մտտ վախտուն
տարեկան. անհամարձակ մտտեցավ և մեկ ակնոցավո-
րին եր նայում, մեկ Ղուլյանին, մեկ էլ սեզանի անկյու-
նում կանգնած գրագրին. վերջինս գրիչը վերցնելով սե-

զանի վրայից տվեց Ղազարին և մի թուզթ յերկա-
րեց նրա առաջ. նա ավելի չվարեց և սկսեց նայել հեռ
ու առաջ սպա հեռ տարվ գրիչը՝

— Ղաթամ չգիտեմ, —ասաց:

Մեկը նրա տեղ ստորագրեց և 30 սուբլի հանձնեցին
Ղազարին. նա գլուխը մի քանի անգամ քորեց ու կար-
ծես շհասկանալով թե բանն ինչումն է, հետացավ լուռ ու
մունջ:

Մազոյի սիրտը թփթփում էր. բայց դեռ նրա ա-
նունը չկար:

— Վարդանյան Ավետիս, —կանչեց նույն ձայնը:

— Սա ստանում է մրացանկ նրա համար, —ասաց
ակնոցավորը, —վոր իր նոր շինած գոմում լուսա-
մուտներ է թողել: Նա ստանում է ամենամեծ գումարը՝
վախտուն սուբլի:

Ավետիսն էլ է ստանում:

Մազոյի անհանգստությանն ավելանում է. նրա
սիրան սկսեց նորից արտախրտել, յերբ նույն ձայնը գո-
սաց վերջապես.

— Մազո Ավագյա՛ն:

Մազոն ավելի յե հուզվում և ձեղքելով ամբոխը
մոտենում է սեզանին. նա շնորհակալական և միաժա-
մանակ մի գարմացական հայացքով սկսում է գիտել
Ղուլյանին և սպա ակնոցավորին, վորն ասում է.

— Մազոն մրցանակ է ստանում իբրև որինակելի
բանջարարույժ-բոստանչի: Նա քարերից մաքրել է իր
արատանդը և գրել բոստան: Այս տարի ստացել է լավ
զգում, կազամբ, գազար և այլն: Նրան մրցանակ է
տրվում քառասուն սուբլի:

Բայց Մազոն վոչինչ չի լսում. նա վերհիշում է
հենց այդ բոպեյին իբ անցյալը՝ սակայն ընդհանուր ազ-
մուկը և վոզեորության ազդակները ընդհատում են
նրա մտածունքի թելը...

Այդ բնականուր բացահայնչութիւններէ տարափի
տակ Մազոն ստորագրում է իրեն յերկարած թուղթը և
ստանում քառասուն սուրբին:

— Հէ՛յ,— ազա՛,— ձայնում են միմիանց գլուզացի-
ները,— Մազոյի գգումը քառասուն մանեթ տարավ:

— Հա՛, հա՛, հա՛,— ծիծաղում են և հանաքներ ա-
նելով մինչև հիմի յել կրկնում են Մազոյենց գլուզում:

— Մազոյի գգումը, Մազոյի գգումը...



<< Ազգային գրադարան



NL0360717

55392

ԳԻՆՆ Ե 10 ԿՈՊ.